ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

14 ՄԱՐՏԻ 2025թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 25 անդամներ:

Բացակա էին՝ Անի Առաքելյանը, Արսեն Հակոբյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝
Կարեն Քենդրջյան, Արմեն Բաղդասարյան, Մուշեղ Հակոբյան, Բաբկեն Բաբայան

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Ասլան Ավետիսյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Արթուր Մուսիկյանը

ԼՍԵՑԻՆ

ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 14-Ի ԹԻՎ 2 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԿԱՐԵՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներով, ինչպես նաև համայնքի ավագանու կանոնակարգով՝ ***Արարատ համայնքի ավագանին որոշում է՝***

1. Հաստատել նիստի հետևյալ օրակարգը.
1) Արարատ համայնքի ավագանու 2025 թվականի մարտի 14-ի թիվ 2 հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին:
2) Համայնքում հանրային հավաքների մասին իրազեկումների գրանցամատյանի վարման կարգը և ձևը հաստատելու մասին:
3) Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ համայնքի ավագանու 2024թ. նոյեմբերի 12-ի թիվ 215-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:
4) «Մար գրուպ 1» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը օգտակար հանածոյի հանքարդյունահանման աշխատանքներին նախնական համաձայնություն տալու մասին:
5) Արարատ համայնքին սեփականության իրավունքով պատկանող Արարատ քաղաքի «Օլիմպոս» ամֆիթատրոնի շենքից 65քմ մակերեսով սենյակ վարձակալությամբ տրամադրելու մասին:
6) Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ համայնքի 2024 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին:
7) Արարատ համայնքի 2024 թվականի բնապահպանական ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը հաստատելու մասին:
8) Արարատ համայնքի Ավշար բնակավայրի վարչական տարածքում գտնվող ոռոգման համակարգը անհատույց օգտագործման իրավունքով Արտաշատ ջրօգտագործողների ընկերությանը հանձնելու մասին:

9) Արարատ համայնքի գյուղ Արարատ, Պարույր Սևակ և Զանգակատուն բնակավայրերի վարչական տարածքներում գտնվող ոռոգման համակարգերը անհատույց օգտագործման իրավունքով Արարատ ջրօգտագործողների ընկերությանը հանձնելու մասին:
10) Արարատ համայնքի Արմաշ բնակավայրի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասի գործառնական նշանակությունը փոփոխելու մասին:
11) Արարատ համայնքի Արարատ գյուղական բնակավայրի վարչական տարածքում գտնվող «ՋԻ ԹԻ ԲԻ ՍԹԻԼ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի գործառնական և նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:
12) Արարատ համայնքի Ավշար բնակավայրի Գ. Լուսավորչի փողոց 2/1 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 03-013-0101-0028 կադաստրային ծածկագիրը կրող 0.10725հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը աճուրդ վաճառքի կարգով օտարելու մասին:
13) Արարատ համայնքի Ավշար բնակավայրի Արարատ-Վեդի խճուղի 2/9 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 03-013-0561-0113 կադաստրային ծածկագիրը կրող 0.3հա մակերեսով բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասը աճուրդ վաճառքի կարգով օտարելու մասին:
14) Արարատ համայնքի Ավշար բնակավայրի Արարատ-Վեդի խճուղի 2/10 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 03-013-0561-0114 կադաստրային ծածկագիրը կրող 0.7509հա մակերեսով բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասը աճուրդ վաճառքի կարգով օտարելու մասին:
15) Արարատ համայնքի Երասխ բնակավայրի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 03-042-0020-0044 կադաստրային ծածկագիրը կրող 0.14412հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքը աճուրդ վաճառքի կարգով օտարելու մասին:
16) Արարատ համայնքի Երասխ բնակավայրի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 03-042-0020-0042 կադաստրային ծածկագիրը կրող 0.13527հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքը աճուրդ վաճառքի կարգով օտարելու մասին:
17) Համայնքային սեփականություն հանդիսացող վարձակալությամբ տրամադրված 0.00348հա մակերեսով հողատարածքը ուղղակի վաճառքի կարգով օտարելու մասին:
18) ՀՀ Արարատի մարզի Արարատ համայնքի սեփականություն հանդիսացող գ. Ավշար բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրի շենքից թվով 3/երեք/ աշխատասենյակ վարձակալությամբ տրամադրելու մասին:
19) Արարատ համայնքի Արարատ գյուղական բնակավայրի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 03-015-0727-0009 կադաստրային ծածկագիրը կրող 0.00509հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքը աճուրդ վաճառքի կարգով օտարելու մասին:
20) Շին տրավերտին սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը հանքարդյունահանության նպատակով հողամաս տրամադրելու մասին:
21) Արարատ համայնքի ավագանու 2023թվականի փետրվարի 14-ի Արարատ համայնքին սեփականության իրավունքով պատկանող «Արարատ քաղաքի մշակույթի և արվեստի կենտրոն» ՀՈԱԿ-ի շենքից և «Օլիմպոս» ամֆիթատրոնի շենքից սենյակներ վարձակալությամբ տրամադրելու մասին թիվ 6 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

Համայնքի ավագանու անդամ Կարեն Ղազարյանը առաջարկեց օրակարգից հանել 4-րդ հարցը, սակայն ավագանու անդամների ձայների մեծամասնությամբ նախագիծը մնաց օրակարգում:

Կողմ-22 Դեմ-1 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 26-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՎԱՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԻՐԱԶԵԿՈՒՄՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐԹՈՒՐ ՄՈՒՍԻԿՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի և 36-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթներով, «Հավաքների ազատության մասին» օրենքի 15-րդ հոդվածի պահանջներով՝ ***Արարատ համայնքի ավագանին որոշում է.***

1. Հաստատել՝
1) Համայնքում հանրային հավաքների մասին իրազեկումների գրանցամատյանի վարման կարգը՝ համաձայն N 1 հավելվածի:
2) Համայնքում հանրային հավաքների մասին իրազեկումների գրանցամատյանի ձևը՝ համաձայն N 2 հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդ օրվանից:

Կողմ-13 Դեմ-11 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 27-Լ)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 12-Ի ԹԻՎ 215-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐԹՈՒՐ ՄՈՒՍԻԿՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 67-րդ հոդվածի 4-րդ մասի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջներով՝ ***Արարատ համայնքի ավագանին որոշում է՝***

1.Արարատ համայնքի ավագանու 2024թվականի նոյեմբերի 12-ի «ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025Թ. ՀԱՄԱՐ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ, ԱՐԱՐԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ, ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 215-Ա որոշման Հավելված 2-ի «Տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմ» բաժնում ավելացնել խմբակցության գործավարի 1 /մեկ/ հաստիք՝ դրույքաչափը սահմանելով 150 000 /մեկ հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ:
2.Հաստատել 2025թվականի համար Հայաստանի Հանրապետության Արարատի համայնքապետարանի աշխատակազմի թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն կից հավելված 2-ի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-22 Դեմ-2 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 28-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՄԱՐ ԳՐՈՒՊ 1 ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԵՐՈՒԹՅԱՆԸ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՅԻ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐԹՈՒՐ ՄՈՒՍԻԿՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 2343-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով 2025 թվականի մարտի 04-ին Արարատ համայնքի գյուղ Արարատ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում « Մար Գրուպ 1» սահմանափակ պատասխանատվությամբ

ընկերության կողմից անցկացված հանրային քննարկման առաջին փուլի արձանագրությունը, ***Արարատ համայնքի ավագանին որոշում է.***

Տալ նախնական համաձայնություն «Մար Գրուպ1» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ՀՀ Արարատի մարզի Արարատի մարմարացված կրաքարերի հանքավայրի օգտակար հանածոյի հանքարդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գտնահատման վերաբերյալ:

Տեղի է ունեցել բուռն քննարկում, ինչի հետևանքով ավագանու նիստին ներկա անդամների ձայների 9-կողմ, 14-դեմ, 2-չի քվեարկել հարաբերակցությամբ որոշումը չի կայացվել:

ԼՍԵՑԻՆ

ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԻ ՕԼԻՄՊՈՍ ԱՄՖԻԹԱՏՐՈՆԻ ՇԵՆՔԻՑ 65ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՍԵՆՅԱԿ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐՏԱԿ ՉԱՔԱՐՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով քաղաքացու դիմումը,***Արարատ համայնքի ավագանին որոշում է.***

1.Արարատ համայնքին սեփականության իրավունքով պատկանող «Օլիմպոս» ամֆիթատրոնի շենքից 65քմ մակերեսով սենյակ վարձակալությամբ տրամադրել Արտակ Ղլիջյանին 1(մեկ)տարի ժամկետով, ամսական 10.000 (տաս հազար) ՀՀ դրամ վարձավճարով՝ իր գործունեությունը ծավալելու նպատակով:
2.Պայմանագրի գործողության ժամկետի ավարտից հետո՝ պայմանագրի պայմանների անփոփոխ մնալու պարագայում, պայմանագիրը համարել երկարացված նույն պայմաններով այնքան ժամանակ, քանի դեռ կողմերից որևիցէ մեկի կողմից չի ներկայացվել պայմանագիրը լուծելու կամ փոփոխելու վերաբերյալ առաջարկություն:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 29-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՊՈՂՈՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ, 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի պահանջներով, ինչպես նաև ավագանու կանոնակարգով, ***Արարատ համայնքի ավագանին որոշում է՝***

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ համայնքի 2024 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 30-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂ ԱՐԱՐԱՏ,ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ ԵՎ ՉԱՆԳԱԿԱՏՈՒՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՎԱՐՁԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՐԱՐԱՏ

ՋՐՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԿԱՐԵՆ ՍՏԱՄԲՈՒԼՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի և 35-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի պահանջներով, ինչպես նաև համայնքի ավագանու կանոնակարգով՝ ***ավագանին որոշում է՝***

1.Արարատ համայնքի գ.Արարատ բնակավայրի վարչական տարածքում գտնվող 71640000/ յոթանասունմեկ միլիոն վեց հարյուր քառասուն հազար/ ՀՀ դրամ արժողությամբ 2400 մետր,Պարույր Սևակ բնակավայրի վարչական տարածքում գտնվող 16680000 /տասնվեց միլիոն վեց հարյուր ութսուն հազար/ ՀՀ դրամ արժողությամբ 550 մետր,Զանգակատուն բնակավայրի վարչական տարածքում 13080000/տասերեք միլիոն ութսուն հազար/ ՀՀ դրամ արժողությամբ 500 մետր ոռոգման համակարգերը անհատույց օգտագործման իրավունքով, անժամկետ հանձնել «Արարատ» ջրօգտագործողների ընկերությանը՝ նշված բնակավայրերում ոռոգում իրականացնելու նպատակով:
2.Համայնքի ղեկավարին՝ «Արարատ» ջրօգտագործողների ընկերության հետ կնքել անժամկետ, անհատույց օգտագործման պայմանագիր:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 31-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎՇԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՐՏԱՇԱՏ ՋՐՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԿԱՐԵՆ ՍՏԱՄԲՈՒԼՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի և 35-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի պահանջներով, ինչպես նաև համայնքի ավագանու կանոնակարգով՝ ***ավագանին որոշում է՝***

1.Արարատ համայնքի Ավշար բնակավայրի վարչական տարածքում գտնվող 69480000/ վաթսունինը միլիոն չորս հարյուր ութսուն հազար/ ՀՀ դրամ արժողությամբ 2400 մետր ոռոգման համակագը անհատույց օգտագործման իրավունքով, անժամկետ հանձնել «Արտաշատ» ջրօգտագործողների ընկերությանը՝ նշված բնակավայրում ոռոգում իրականացնելու նպատակով:
2.Համայնքի ղեկավարին՝ «Արտաշատ» ջրօգտագործողների ընկերության հետ կնքել անժամկետ, անհատույց օգտագործման պայմանագիր:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 32-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐԹՈՒՐ ԻՍԱՋԱՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով,***Արարատ համայնքի ավագանին որոշում է՝***

1.Հաստատել Արարատ համայնքի 2024թվականի բնապահպանական ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:
2.Համայնքի ավագանու հաստատած հաշվետվությունը հրապարակել համայնքի պաշտոնական կայքում:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 33-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՄԱՇ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Ձեկ. ԿԱՐԵՆ ՍՏԱՄԲՈՒԼՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 7-րդ հոդվածի 9-րդ, 15-րդ և 16-րդ կետերի պահանջներով և հիմք ընդունելով Արարատի մարզպետի 2025 թվականի փետրվարի 04-ի N 01//00721-2025 գրությունը, ***համայնքի ավագանին որոշում է.***

1.Արարատ համայնքի Արմաշ բնակավայրի վարչական տարածքում գտնվող,համայնքային սեփականություն հանդիսացող,03-019-0228-0006 կադաստրային ծածկագիրը կրող 0.21272 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության արոտավայր հողամասի գործառնական նշանակությունը փոխել՝ բազմամյա տնկարկներ հողամասի:
2.Վերոնշյալ հողամասի գործառնական նշանակությունը փոփոխված է համարվում հողամասերի նկատմամբ փոփոխված գործառնական նշանակությամբ իրավունքները պետական գրանցում ստանալու պահից:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 34-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԱՐԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՋԻ ԹԻ ԲԻ ՍԹԻԼ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Ձեկ. ԿԱՐԵՆ ՍՏԱՄԲՈՒԼՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 7-րդ հոդվածի 9-րդ, 15-րդ և 16-րդ կետերի պահանջներով և հիմք ընդունելով քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի՝19.02.2025 թվականի թիվ 2/փ-62 դրական եզրակացությունը, Արարատի մարզպետի 2025 թվականի փետրվարի 24-ի N 01//01300-2025 գրությունը, հաշվի առնելով ՝ «ՋԻ ԹԻ ԲԻ ՍԹԻԼ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության դիմումը, ***համայնքի ավագանին որոշում է.***

1.Արարատ համայնքի Արարատ գյուղական բնակավայրի վարչական տարածքում գտնվող,համայնքային սեփականություն հանդիսացող,«ՋԻ ԹԻ ԲԻ ՍԹԻԼ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը վարձակալությամբ տրամադրված 03-015-0513-0063 կադաստրային ծածկագիրը կրող 0.29088 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության

արոտավարի նպատակային նշանակությունը փոխել արդյունաբերության,ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գործառնական նշանակությունը՝ արդյունաբերական օբյեկտների հողերի՝ օդի մաքրման կայան կառուցելու համար:
2.Վերոնշյալ հողամասի գործառնական նշանակությունը փոփոխված է համարվում հողամասերի նկատմամբ փոփոխված գործառնական նշանակությամբ իրավունքները պետական գրանցում ստանալու պահից:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 35-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԷԴԳԱՐ ԱՎԵՏԻՔԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԿԱՐԵՆ ՍՏԱՄԲՈՒԼՅԱՆ)

Քաղաքացի՝ էդգար Ավետիքի Հովհաննիսյանը Արարատ համայնքի Արարատ գյուղական բնակավայրի վարչական տարածքում ունի սեփականության իրավունքով իրեն պատկանող 0,02181 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսք: Նշված հողատեսքի հարակից մասում առկա է ազատ տարածք, որը չի օգտագործվում այլ անձանց կողմից: Քաղաքացին դիմել է համայնքապետարան՝ նշված տարածքը սեփականության իրավունքով, կադաստրային արժեքով իրեն օտարելու խնդրանքով: Ղեկավարվելով ՀՀ «Հողային օրենսգրքի» 66-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով, ՀՀ կառավարության 26.05.2016թ. թիվ 550-Ն որոշման պահանջներով և նկատի ունենալով, որ քաղաքացի՝ էդգար Ավետիքի Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող,03-015-1208-0105 ծածկագիրը կրող 0.02181 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության այլ հողամասին կից ազատ, համայնքային սեփականություն հանդիսացող 0.01207 հա մակերեսով հողատարածքը / ծածկագիր՝ 03-015-1208-ից/ չի գտնվում ՀՀ «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտում, հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, ինչպես նաև հնարավոր չէ հողամասը որպես առանձին գույքային միավոր օտարել աճուրդային կարգով,առաջնորդվելով համայնքի ավագանու կանոնակարգով,***ավագանին որոշում է՝***

Բավարարել քաղաքացի՝ էդգար Ավետիքի Հովհաննիսյանի խնդրանքը և Արարատ համայնք Արարատ գյուղական բնակավայրի վարչական տարածքում գտնվող, իրեն սեփականության իրավունքով պատկանող գյուղատնտեսական նշանակության այլ հողամասի հարակից 0.01207 հա մակերեսով ազատ, համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը, ---------- ՀՀ դրամ վճարով, ուղղակի վաճառքի կարգով օտարել նրան՝ էդգար Ավետիքի Հովհաննիսյանին:
2. Հողամասի ուղղակի վաճառքի կարգով օտարման գործընթացը կազմակերպել սույն որոշման ուժի մեջ մտնելու օրվանից 1 տարվա ընթացքում:

ԼՍԵՑԻՆ

ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎՇԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ Գ.ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ՓՈՂՈՑ 2/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 03-013-0101-0028 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐԸ ԿՐՈՂ 0.10725 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԿԱՐԵՆ ՍՏԱՄԲՈՒԼՅԱՆ)

Համաձայն տեղազննության արդյունքների,Արարատ համայնքի Ավշար բնակավայրի Գ.Լուսավորչի 2/1 հասցեում գտնվող,/ծածկագիր՝ 03-013-0101-0028/ համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի բնակելի կառուցապատման 0.10725 հա մակերեսով հողամասը ենթակա է աճուրդ վաճառքով օտարելու և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի և Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 67-րդ և 68-րդ հոդվածներով,առաջնորդվելով ավագանու կանոնակարգով, ***համայնքի ավագանին որոշում է.***

1.Աճուրդ վաճառքով օտարել Արարատ համայնքի Ավշար բնակավայրի Գ.Լուսավորչի 2/1 հասցեում գտնվող, 03-013-0101-0028 կադաստրային ծածկագիրը կրող 010725 հա մակերեսով,համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը:
2.Նշված տարածքի օտարման մեկնարկային գին սահմանել 1500 ՀՀ դրամ 1քմ-ի համար, նախավճար սահմանել մեկնարկային գնի 50 %-ի չափով, մասնակցության վճար՝ 5000 դրամ, աճուրդային քայլի չափը մեկնարկային գնի 5% չափով:
3.Համայնքի ղեկավարին՝ աճուրդ վաճառքի հետ կապված աշխատանքները կազմակերպել սույն որոշման ուժի մեջ մտնելու օրվանից 1 տարվա ընթացքում Հայաստանի Հանրապետության«Հողային օրենսգրքի» և գործող նորմատիվ ակտերի պահանջներին համապատասխան:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 36-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎՇԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԱՐԱՐԱՏ-ՎԵԴԻ ԽՃՈՒՂԻ 2/9 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 03-013-0561-0113 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐԸ ԿՐՈՂ 0.3 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԿԱՐԵՆ ՍՏԱՄԲՈՒԼՅԱՆ)

Համաձայն տեղազննության արդյունքների,Արարատ համայնքի Ավշար բնակավայրի Արարատ-Վեդի խճուղի 2/9 հասցեում գտնվող,/ծածկագիր՝ 03-013-0561-0113/ համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի բնակելի կառուցապատման 0.3 հա մակերեսով հողամասը ենթակա է աճուրդ վաճառքով օտարելու և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի և Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 67-րդ և 68-րդ հոդվածներով,առաջնորդվելով ավագանու կանոնակարգով, ***համայնքի ավագանին որոշում է.***

1.Աճուրդ վաճառքով օտարել Արարատ համայնքի Ավշար բնակավայրի Արարատ-Վեդի խճուղի 2/9 հասցեում գտնվող, 03-013-0561-0113 կադաստրային ծածկագիրը կրող 0.3 հա մակերեսով,համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասը:
2.Նշված տարածքի օտարման մեկնարկային գին սահմանել 1500 ՀՀ դրամ 1քմ-ի համար, նախավճար սահմանել մեկնարկային գնի 50 %-ի չափով, մասնակցության վճար՝ 5000 դրամ, աճուրդային քայլի չափը մեկնարկային գնի 5%չափով:
3.Համայնքի ղեկավարին՝ աճուրդ վաճառքի հետ կապված աշխատանքները կազմակերպել սույն որոշման ուժի մեջ մտնելու օրվանից 1 տարվա ընթացքում Հայաստանի Հանրապետության«Հողային օրենսգրքի» և գործող նորմատիվ ակտերի պահանջներին համապատասխան:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 37-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎՇԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԱՐԱՐԱՏ-ՎԵԴԻ ԽՃՈՒՂԻ 2/10 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 03-013-0561-0114 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐԸ ԿՐՈՂ 0.7509 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ՁԵԿ. ԿԱՐԵՆ ՍՏԱՄԲՈՒԼՅԱՆ)

Համաձայն տեղազննության արդյունքների,Արարատ համայնքի Ավշար բնակավայրի Արարատ-Վեդի խճուղի 2/10 հասցեում գտնվող,/ծածկագիր՝ 03-013-0561-0114/ համայնքային սեփականություն հանդիսացող բնկավայրերի բնակելի կառուցապատման 0.7509 հա մակերեսով հողամասը ենթակա է աճուրդ վաճառքով օտարելու և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի և Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 67-րդ և 68-րդ հոդվածներով,առաջնորդվելով ավագանու կանոնակարգով, ***համայնքի ավագանին որոշում է.***

1.Աճուրդ վաճառքով օտարել Արարատ համայնքի Ավշար բնակավայրի Արարատ-Վեդի խճուղի 2/10 հասցեում գտնվող, 03-013-0561-0114 կադաստրային ծածկագիրը կրող 0.7509 հա մակերեսով,համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասը:
2.Նշված տարածքի օտարման մեկնարկային գին սահմանել 1500 ՀՀ դրամ 1քմ-ի համար, նախավճար սահմանել մեկնարկային գնի 50 %-ի չափով, մասնակցության վճար՝ 5000 դրամ, աճուրդային քայլի չափը մեկնարկային գնի 5%չափով:
3.Համայնքի ղեկավարին՝ աճուրդ վաճառքի հետ կապված աշխատանքները կազմակերպել սույն որոշման ուժի մեջ մտնելու օրվանից 1 տարվա ընթացքում Հայաստանի Հանրապետության«Հողային օրենսգրքի» և գործող նորմատիվ ակտերի պահանջներին համապատասխան:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 38-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՐԱՍԽ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 03-042-0020-0044 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐԸ ԿՐՈՂ 0.14412 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՀՈՂԱՏԵՍՔԸ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ՁԵԿ. ԿԱՐԵՆ ՍՏԱՄԲՈՒԼՅԱՆ)

Համաձայն տեղազննության արդյունքների,Արարատ համայնքի Երասխ բնակավայրի վարչական տարածքում գտնվող,/ծածկագիր՝ 03-042-0020-0044/ համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 0.14412 հա մակերեսով այլ հողատեսքը ենթակա է աճուրդ վաճառքով օտարելու և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի և Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 67-րդ և 68-րդ հոդվածներով,առաջնորդվելով ավագանու կանոնակարգով, ***համայնքի ավագանին որոշում է.***

1.Աճուրդ վաճառքով օտարել Արարատ համայնքի Երասխ բնակավայրի վարչական տարածքում գտնվող, 03-042-0020-0044 կադաստրային ծածկագիրը կրող 0.14412 հա մակերեսով,համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքը:
2.Նշված տարածքի օտարման մեկնարկային գին սահմանել 550000 ՀՀ դրամ, նախավճար

սահմանել մեկնարկային գնի 50 %-ի չափով, մասնակցության վճար՝ 5000 դրամ, աճուրդային քայլի չափը մեկնարկային գնի 5%չափով:
3.Համայնքի ղեկավարին՝ աճուրդ վաճառքի հետ կապված աշխատանքները կազմակերպել սույն որոշման ուժի մեջ մտնելու օրվանից 1 տարվա ընթացքում Հայաստանի Հանրապետության«Հողային օրենսգրքի» և գործող նորմատիվ ակտերի պահանջներին համապատասխան:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 39-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՐԱՍԽ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 03-042-0020-0042 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐԸ ԿՐՈՂ 0.13527 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՀՈՂԱՏԵՍՔԸ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Ձեկ. ԿԱՐԵՆ ՍՏԱՄԲՈՒԼՅԱՆ)

Համաձայն տեղազննության արդյունքների,Արարատ համայնքի Երասխ բնակավայրի վարչական տարածքում գտնվող,/ծածկագիր՝ 03-042-0020-0042/ համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 0.13527 հա մակերեսով այլ հողատեսքը ենթակա է աճուրդ վաճառքով օտարելու և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի և Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 67-րդ և 68-րդ հոդվածներով,առաջնորդվելով ավագանու կանոնակարգով, ***համայնքի ավագանին որոշում է.***

1.Աճուրդ վաճառքով օտարել Արարատ համայնքի Երասխ բնակավայրի վարչական տարածքում գտնվող, 03-042-0020-0042 կադաստրային ծածկագիրը կրող 0.13527 հա մակերեսով,համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքը:
2.Նշված տարածքի օտարման մեկնարկային գին սահմանել 500000 ՀՀ դրամ, նախավճար սահմանել մեկնարկային գնի 50 %-ի չափով, մասնակցության վճար՝ 5000 դրամ, աճուրդային քայլի չափը մեկնարկային գնի 5%չափով:
3.Համայնքի ղեկավարին՝ աճուրդ վաճառքի հետ կապված աշխատանքները կազմակերպել սույն որոշման ուժի մեջ մտնելու օրվանից 1 տարվա ընթացքում Հայաստանի Հանրապետության«Հողային օրենսգրքի» և գործող նորմատիվ ակտերի պահանջներին համապատասխան:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 40-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՎԱՐՉԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ 0.00348 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Ձեկ. ԿԱՐԵՆ ՍՏԱՄԲՈՒԼՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով,Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ, 56-րդ հոդվածի 5-րդ, 66-րդ հոդվածի 4-րդ կետով, ինչպես նաև համայնքի ավագանու կանոնակարգով և հիմք ընդունելով քաղաքացի՝ Շահեն Գրիգորյանին վարձակալության իրավունքով տրամադրված 03-086-0028-0004 կադաստրային ծածկագիրը

կրող 0.00348 հա մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասը իրեն օտարելու մասին դիմումը,***համայնքի ավագանին որոշում է.***

1.Քաղաքացի՝ Շահեն Գրիգորյանին վարձակալության իրավունքով տրամադրված, համայնքային սեփականություն հանդիսացող, Սուրենավան բնակավայրի վարչական տարածքում գտնվող, 03-086-0028-0004 կադաստրային ծածկագիրը կրող 0.00348 հա մակերեսով բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասը գնման նախապատվության իրավունքով, ուղղակի վաճառքի կարգով օտարել նրանց:
2.Հողամասի օտարման գին սահմանել 105000 ՀՀ դրամ :

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 41-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ Գ.ԱՎՇԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐԻ ՆՍՏԱՎԱՅՐԻ ՇԵՆՔԻՑ ԹՎՈՎ 3 /ԵՐԵՔ/ ԱՇԽԱՏԱՍԵՆՅԱԿ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԿԱՐԵՆ ՍՏԱՄԲՈՒԼՅԱՆ)

«Ոռոգվող գյուղատնտեսության զարգացումը Արարատի և Արմավիրի մարզերում» (IADAAM) ծրագրի շրջանակներում գյուղատնտեսության աջակցության ծրագրերի իրականացման նպատակով Արարատի համայնքապետարան է դիմել ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը՝ Արարատ համայնքի գ.Ավշար բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում թվով 3/երեք/ աշխատասենյակ վարձակալության իրավունքով Նախարարությանը տրամադրելու խնդրանքով: Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Նախարարության գրությունը,***համայնքի ավագանին որոշում է.***

1.ՀՀ Արարատի մարզի Արարատ համայնքի սեփականություն հանդիսացող գ.Ավշար բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրի շենքից թվով 3/երեք/ աշխատասենյակ՝ 13. 40քմ, 14.20 քմ, 13.70քմ՝ ընհանուր 41.30 քմ մակերեսով, 1 /մեկ/ տարի ժամկետով, ամսական 180.000/մեկ հարյուր ութսուն հազար/ ՀՀ դրամ վարձավճարով տրամադրել էկոնոմիկայի նախարարությանը՝ «Ոռոգվող գյուղատնտեսության զարգացումը Արարատի և Արմավիրի մարզերում» (IADAAM) ծրագրի իրականացման նպատակով:
2.Պայմանագրի գործողության ժամկետի ավարտից հետո պայմանագիրը համարել երկարացված նույն պայմաններով այնքան ժամանակ,քանի դեռ կողմերից որևիցէ մեկը չի ներկայացրել պայմանագիրը լուծելու կամ փոփոխելու վերաբերյալ առաջարկություն:
3.Համայնքի ղեկավարին՝ Նախարարության հետ կնքել վարձակալության պայմանագիր:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 42-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԱՐԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 03-015-0727-0009 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐԸ ԿՐՈՂ 0.00509 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՀՈՂԱՏԵՍՔԸ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԿԱՐԵՆ ՍՏԱՄԲՈՒԼՅԱՆ)

Համաձայն տեղազննության արդյունքների,Արարատ համայնքի Արարատ գյուղական բնակավայրի վարչական տարածքում գտնվող,/ծածկագիր՝ 03-015-0727-009/ համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 0.00509 հա մակերեսով այլ հողատեսքը ենթակա է աճուրդ վաճառքով օտարելու և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի և Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 67-րդ և 68-րդ հոդվածներով,առաջնորդվելով ավագանու կանոնակարգով, ***համայնքի ավագանին որոշում է.***

1.Աճուրդ վաճառքով օտարել Արարատ համայնքի Արարատ գյուղական բնակավայրի վարչական տարածքում գտնվող, 03-015-0727-0009 կադաստրային ծածկագիրը կրող 0.00509 հա մակերեսով,համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքը:
2.Նշված տարածքի օտարման մեկնարկային գին սահմանել 50000 ՀՀ դրամ, աճուրդային քայլի չափը մեկնարկային գնի 5%չափով:
3.Համայնքի ղեկավարին՝ աճուրդ վաճառքի հետ կապված աշխատանքները կազմակերպել սույն որոշման ուժի մեջ մտնելու օրվանից 1 տարվա ընթացքում Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» և գործող նորմատիվ ակտերի պահանջներին համապատասխան:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 43-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՇԻՆ ՏՐԱՎԵՐՏԻՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԿԱՐԵՆ ՍՏԱՄԲՈՒԼՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի 5-րդ մասի,Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի,Հայաստանի Հանրապետության կառավարության 12.04.2001թվականի թիվ 286-Ն որոշման 44-րդ կետի ը/ենթակետի պահանջներով, ինչպես նաև առաջնորդվելով Արարատ համայնքի ավագանու 21.04.2022 թվականի «Արարատ համայնքի վարչական տարածքում գտնվող,արդյունաբերության,ընդերքօգտագործման և այլ արտադրական հողերի համար տարեկան վարձավճարի չափը սահմանելու մասին» թիվ 49 որոշման պահանջներով,հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության 19 փետրվարի 2025 թվականին տրված N Լ-764 լեռնահատկացման ակտը , N ՇԱԹ-29/764 օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվությունը ,հաշվի առնելով «ՇԻՆ ՏՐԱՎԵՐՏԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված դիմումը, ***համայնքի ավագանին որոշում է՝***

1.Արարատ քաղաքի 5 հողամաս հասցեում գտնվող Արարատ քաղաքի կադաստրային քարտեզի 03-002-0683-0025 ծածկագրի 1.68356 հա մակերեսով, համայնքային սեփականություն հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, ընդերքի օգտագործման համար տրամադրված հողամասը առանց մրցույթի մինչև 2044 թվականի փետրվարի 19-ը տրամադրել «ՇԻՆ ՏՐԱՎԵՐՏԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ հանքարդյունահանման և ընդերքօգտագործման նպատակով:
2.Վարձավճարի չափ սահմանել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի կադաստրային արժեքի 4 % չափով 1 հա-ի համար:

3.Համայնքի ղեկավարին՝ «ՇԻՆ ՏՐԱՎԵՐՏԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ կնքել պայմանագիր Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի և գործող նորմատիվ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 44-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 14-Ի ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ ԿԵՆՏՐՈՆ ՀՈԱԿ-Ի ՇԵՆՔԻՑ ԵՎ ՕԼԻՄՊՈՍ ԱՄՖԻԹԱՏՐՈՆԻ ՇԵՆՔԻՑ ՍԵՆՅԱԿՆԵՐ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԹԻՎ 6 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐԹՈՒՐ ԻՍԱՋԱՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջներով, համայնքի ավագանու կանոնակարգով, հաշվի առնելով Սերոբ Հովակիմյանի պարուսուցման նպատակով վարձակալած սենյակի վարձավճարը փոփոխելու մասին դիմումը, ***Արարատ համայնքի ավագանին որոշում է՝***

1.Արարատ համայնքի ավագանու 2023 թվականի փետրվարի 14-ի «Արարատ համայնքին սեփականության իրավունքով պատկանող Արարատ քաղաքի մշակույթի և արվեստի կենտրոն ՀՈԱԿ-ի շենքից և Օլիմպոս ամֆիթատրոնի շենքից սենյակներ վարձակալությամբ տրամադրելու մասին» թիվ 6 որոշման 1-ին մասի ա) կետի «60.000 (վաթսուն հազար)» բառերը փոխարինել «40.000 (քառասուն հազար)» բառերով և 1-ին մասի ա) կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1.Արարատ համայնքին սեփականության իրավունքով պատկանող <<Արարատ քաղաքի մշակույթի և արվեստի կենտրոն>> ՀՈԱԿ-ի շենքից 80քմ մակերեսով սենյակ վարձակալությամբ տրամադրել.

ա) Սերոբ Հովակիմյանին 1 (մեկ)տարի ժամկետով, ամսական 40.000 (քառասուն հազար) ՀՀ դրամ վարձավճարով, յուրաքանչյուր շաբաթվա չորեքշաբթի և շաբաթ օրերին, ժամը 1400-ից – 1800 -ն պարուսուցման նպատակով: »:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի ապրիլի 1-ից:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 45)*

Ավագանու անդամներ

ԿԱՐԵՆ ԱԴԱՄՅԱՆ

ԾՈՎԻՆԱՐ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ԼՈՒՍԻՆԵ ԱՂԱԽԱՆՅԱՆ

ԱՍԼԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՖԻՐԴՈՒՍ ԶԱՔԱՐՅԱՆ

ՌՈԲԵՐՏ ՋԵՅՆԱԼՅԱՆ

ԼԱՐԻՍԱ ԹՈՒՆՅԱՆ

ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆ

ԱՍՊՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԱՐՄԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԿԱՐՈ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԳԱՅԱՆԵ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՌԻՄԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՎԱՀԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԿԱՐԵՆ ՂԱՋԱՐՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ՄԱԼԽԱՍՅԱՆ

ԳԵՎՈՐԳ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՍԱՐԳԻՍ ՄԱՆՎԵԼՅԱՆ

ԱՐՏԱԿ ՄԵԼԻՔՅԱՆ

ՍԵՐԳՈ ՄԻՆԱՍՅԱՆ

ՍԻՄՈՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԳԵՂԱՄ ՍԻՆԱՆՅԱՆ

ԱՎԱԳ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԱՍԼԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Նիստն արձանագրեց՝ Արթուր Մուսինյանը